ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
07.06.2019թ. կնքված թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական վեբ կայքի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 26 հուլիս 2019թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և և «Վեբ ստուդիո ուան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գաղուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2019 թվականի հունիսի 07-ին կնքված ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական վեբ կայքի ստեղծման ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական վեբ կայքի ստեղծման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2019 թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900013220026 ՀՎՀՀ 02534328	«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ Ք. Երևան, Դավիթ Անհաղթ փող., 8 շենք, 3-րդ հարկ Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2050022375301001 ՀՎՀՀ 02708407
Գլխավոր քարտուղար----------Գ. Գրիգորյան (ստորագրություն) Կ.Տ.	տնօրեն ----------Գ. Գաղուկյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
07.06.2019 թ. կնքված թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատես. Չ/Բ համարը	գնումների պլանով նախատես.միջ անցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211137/501	ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական վեբ կայքի ստեղծման ծառայություններ	330000	660000	990000	1320000	1320000	1320000	1320000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար----------Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթ Անհաղթ փող., 8 շենք, 3-րդ հարկ
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022375301001
ՀՎՀՀ 02708407

տնօրեն ----------Գ. Գաղուկյան
(ստորագրություն)
Կ.Տ.